Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
հունվարի 31-ի N 68 - Լ որոշման

ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՅՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2019-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	**Միջոցառման անվանումը**	**Նպատակը**	**Կատարողը**	**Կատարման ժամկետը**	**Ֆինանսական ապահովումը**	**Ակնկալվող արդյունքը**
1.	«Հողերի չեզոք դեգրադացիայի իրականացման ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Հողերի չեզոք դեգրադացիայի նպատակային ցուցանիշների որոշում, հողերի դեգրադացիայի կանխարգելում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2019 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ստեղծված են համապատասխան նախադրյալներ դեգրադացված հողերի վերա-կանգնման և հողերի հետագա դեգրադացումը նվազագույնի հասցնելու համար

2.	Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի, Միավորված ազգերի կազմակերպության «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի և Միավորված ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի մասին երաշտի և (կամ) անապատացման ենթարկված երկրներում, մասնավորապես, Աֆրիկայում» կոնվենցիաների միջև առկա սիներգիկ կապերի բացահայտում և համատեղ գործողությունների ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Բարձրացնել Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի, Միավորված ազգերի կազմակերպության «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի և Միավորված ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի մասին երաշտի և (կամ) անապատացման ենթարկված երկրներում, մասնավորապես, Աֆրիկայում» կոնվենցիաների իրականացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2020 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Կոնվենցիաների շրջանակներում իրականացվող գործողությունների կրկնություններից խուսափում և նյութական միջոցների տնտեսում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ